



## ԽՈՐՏԱԿՎԱԾ ԸՆՏԱՆԻՔԸ

### ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Յուրաքանչյուր մարդ սերում է մեկ խորտակված ընտանիքից: Հոգևոր հատկություններն ու ժառանգական հակումներն Ադամից ու Եվայից փոխանցվել են մեզ Անկման անեծքի միջոցով: Սակայն Հիսուսը եկավ՝ ազատելու մեզ այդ անեծքից:

### ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ԾՆՆԴ. 3:1,3-6

1 Եւ օձը ավելի խորամանկ էր քան թէ դաշտի բոլոր գազանները, որ Եհովա Աստուածն ստեղծել էր. Եւ կնոջն ասեց. Իրա՞վ Աստուած ասեց, որ Պարտէզի ոչ մի ծառից չուտէք: 2 Եւ կինն ասեց օձին. Պարտէզի ծառերի պտղից ուտում ենք. 3 Բայց այն ծառի պտղից որ պարտէզի մէջտեղն է, Աստուած ասեց, Մի ուտէք նորանից, և նորան մի դաչիք, որ չմեռնիք: 4 Եւ օձը կնոջն ասեց, Բնաւ չէք մեռնի: 5 Այլ Աստուած գիտէ, թէ այն օրը որ նորանից ուտէք, ձեր աչքերը կբացվին, և Աստուծոյ պէս կլինիք՝ բարին և չարը գիտացող: 6 (1) Եւ կինը տեսաւ, որ ծառը լաւ էր ուտելու համար, (2) և թէ հաճելի էր աչքերին, (3) և փափաքելի է ծառը նայելու համար, առավ նորա պտղից և կերավ, և իր հետ իր մարդին էլ տուավ, և նա կերավ:

1 Հով. 2:16 - 16 ...որովհետև ամեն ինչ որ աշխարհքում է՝ ՄԱՐՄՆԻ ՑԱՆԿՈՒԹԻՒՆԸ, ԱԶՔԵՐԻ ԾԱՆԿՈՒԹԻՒՆԸ և այս կեանքի ամբարտաւանութունը (pride of life), Հօրիցը չէ, այլ աշխարհքից է:

### • ՄԵՂՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԵՐԵՔ ԲԱՆ ՄՏԱՎ ԱՇԽԱՐՀ.

- I. ԱՍՈԹ/SHAME
- II. ՄԵՂԱԴՐԱՆՔ/BLAME
- III. ՀՈՉԱԿ/FAME

Ծննդ. 3:7 - 7 Եւ նորանց երկուսի աչքերը բացվեցին, և ՀԱՄԿԱՑԱՆ Թէ ՄԵՐԿ ԵՆ. Եւ թզենու տերևներ կարեցին, և իրանց համար ծածկոցներ շինեցին: Երկուսի աչքերն էլ բացուեցին, և նրանք հասկացան, որ մերկ են: Նրանք թզենու տերևներն իրար կարեցին և իրենց համար գոգնոց շինեցին: 8 Երեկոյան նրանք լսեցին Տէր Աստծու՝ դրախտում շրջագայելու ոտնաձայնը, և Ադամն ու իր կինը Տէր Աստծուց թաքնվեցին դրախտի ծառերի մէջ: 9 Տէր Աստված կանչեց Ադամին ու ասաց նրան. «Ո՛ւր ես»: 10 Ադամը պատասխանեց. «Լսեցի քո ձայնն այստեղ՝ դրախտում, ամաչեցի, որովհետև մերկ էի, և թաքնվեցի»:

### I. ԱՍՈԹ/SHAME

- ԱՆԿՈՒՄԻՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ԱԴԱՄՆ ՈՒ ԵՎԱՆ ՀԱՄԿԱՑԱՆ, ՈՐ ԻՐԵՆՔ ՄԵՐԿ ԵՆ և ԹԱՔՆՎԵՑԻՆ ԱՍԾՈՒՑ և ԻՐԵՆՔ ԻՐԵՆՑԻՑ:

Ծննդ. 2:25 - 25 Եւ նորանք երկուսը մերկ էին՝ Ադամը և իր կինը, և չէին ամաչում:

**Ատառ** – տիաճ ինքնագիտակցված զգացմունք է, որը սովորաբար կապված է սեփական անձի բացասական գնահատման հետ, այն կարող է լինել տարբեր դրդապատճառների, նեղությունների, ազդեցությունների, անվստահության, անզորության, իրեն անարժեք զգալու զգացողությունների արդյունք:

Եբր. 4:13 - <sup>13</sup> Եւ չկա մի արարած աներևույթ նԸԱ երեսից. բայց ամենն էլ մերկ և բաց է նորա աչքերի առաջին որի հետ է մեր բանը:

**1. Մենք հաճախ փորձում ենք թաքցնել մեր ամոթը: Սակայն Աստված ուզում է մեզ ծածկել՝ հազցնելով մեզ Իր արդարությունն ու փրկությունը:**

<sup>21</sup> Տէր Աստուած Ադամի ու Նրա կնոջ համար կաշվից զգեստներ պատրաստեց և հագցրեց նրանց:

Ես. 61:10 - <sup>10</sup> Ես ուրախությամբ պիտի ուրախանամ Տէրով, իմ անձը պիտի խնդա իմ Աստուծով. որովհետև նա ինձ փրկության հանդերձներ հագցրեց, արդարության պատմուհանը գցեց ինձ վրա.

**• Խնդրում եմ զանազանք ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ – ԱՐԴԱՐ կյանք ապրելուց: Արդարություն նշանակում է ունենալ ճիշտ հարաբերություն և դիրք Աստծո հետ:**

Հո. 4:3 - <sup>3</sup> Արրահամը հավատաց Աստուծուն, և այդ հավատի համար էլ Աստված արդար համարեց (deposited) նորան:

Առակ. 24:16 - <sup>16</sup> Բայց եթէ արդարը եօթն անգամ էլ ընկնի, պիտի կանգնի...

- **HE COVERS OUR SIN**  
 JEHOVAH-TSIDKENU – HE IS OUR RIGHTEOUSNESS  
 Եր. 23:6 - <sup>6</sup> ԵՎ ՍԱ Է ՆՈՐԱ ԱՆՈՒՆԸ, ՈՐՈՎ ՆԱ Կ'ԿՈՉՈՒՒ՝ ՏԷՐԸ՝ ՄԵՐ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ:
- **JEHOVAH-M'KADDESH – HE SANCTIFIES US, HELPS US GROW**  
 Ղև. 20:8 - <sup>8</sup> ԵՍ ԵՄ ԵՅՈՎԱՆ ՈՐ ՁԵՁ ՍՐԲՈՒՄ ԵՄ:

Ես. 54:4 - <sup>4</sup> Մի վախեցիր որովհետև պիտի չամաչես, և մի՛ նեղվիր, որ քեզ նախատեսին. որովհետև քո ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՄՕԹԸ պիտի մոռանաս, և քո որբևայրության նախատինքը այլևս պիտի չհիշես:

1 Պետ. 2:6 - <sup>6</sup> ... եվ չիսուսին հավատացողը չի ամաչի:  
 Որովհետև — Ես. 53:6 - Տէրը նորա վրա դրավ մեր ամենի մեղքը:

**2. Հիմա խնդիրը կայանում է սրանում, միգուց է ասեք «դեռ ես սխալներ եմ գործում» ապա ինչ է լինում արդարությունը: «որովհետև դու ունես մեղադրող մեկը»**

**II. ՄԵՂԱԴՐԱՆՔ/BLAME**

Ծննդ. 3:11-13 - <sup>11</sup> Աստուած ասաց նրան. «Ո՞վ հայտնեց քեզ, թէ մերկ ես: Արդեօք կերա՞ր այն ծառի պտղից, որից պատուիրել էի, որ չուտես»: <sup>12</sup> Ադամն ասաց. «Այա կիներ, որ ՏՎ ԵԾԻՐ ինձ, ՆԱ՝ տվեց ինձ ծառի պտղից, և ես կերա»: <sup>13</sup> Տէր Աստուած ասաց կնոջը. «Այդ ի՞նչ ես արել»: Կինն ասաց. «Օձը խաբեց ինձ, և ես կերա»:

- Երկուսն էլ ճիշտ պատասխանեցին, բայց առանց պատասխանատվություն կրելու:  
 Կամ՝ դա իմ սխալը չէ, կամ էլ՝ դա միշտ իմ սխալն է:

- **Մեղադրանքը դա Սատանայից է:**

Հայ. 12:10 - 10 Եւ մեծ ձայն լսեցի որ ասում էր երկնքում. Հիմա փրկութիւնը և գորութիւնը և թագավորութիւնը եղավ մեր Աստուծուն, և իշխանութիւնը եղավ նորա Օծեալին, որ վայր գցվեց Մեծ եղբայրների չարախօսքը, որ չարախօսում էր նորանցից Աստուծո առաջին ցերեկ և գիշեր.

- **ՆԱԽՔԱՆ ՄԵԿԻՆ ՄԵՂԱԴՐԵԼԸ, ՀԻԾԻՐ ՈՐ ՆԱ ՔՈ ՔՈՒՅՐՆ Է ԿԱՍ ԵՂԲԱՅՐԸ:**

**Երբ մենք մեղադրում ենք ինչ-որ մեկին, մենք միաբանվում ենք թշնամու ուժերի հետ և այդ պահին վարվում ենք սատանայի պես:**

### III. ՀՈՉԱԿ/FAME

- **Ադամն իրեն առանձնացրեց Եվայից և նրան պիտակավորեց:**

Ծննդ. 2:23 - 23 Ադամն ասաց. «Այժմ սա ոսկոր է իմ ոսկրից և մարմին՝ իմ մարմնից: Թող սա կոչվի կին, որովհետև իր ամուսնուց ստեղծվեց»:

Ծննդ. 5:2 - 2 Արու և էգ ստեղծեց նորանց, և օրհնեց նորանց, և նորանց անունը Ադամ (manKind) կոչեց նորանց ստեղծվելու օրը:

Ծննդ. 3:20 - 20 Եւ Ադամն իր կնոջ անունը Եվա կոչեց. Որովհետև նա եղավ բոլոր կենդանեաց մայրը:

- **Սիրելի մայրեր, Կյանքում ձեր մեծագույն կոչումն Աստծո որդիներ լինելն է: Բայց, եթե ընդունեք ձեր մեծագույն կոչումն որպես Աստծո որդիներ, ապա կհասկանաք որ Աստված ձեզանից յուրաքանչյուրին տարբեր տաղանդներ է տվել՝ ըստ Ա Կորնթացիների 12-րդ գլխի:**

Ծննդ. 3:15 - 15 Եւ ես թշնամութիւն եմ դնում քո և կնոջ մէջտեղը, և քո սերունդի և նորա սերունդի մէջտեղը. Նա քո գլուխը ջախջախէ, և դու նորա գարշապարը խայթես:

Գործ. 3:25 - 25 Եւ քո «սերմով» զավակով պիտի օրհնվեն երկրի բոլոր ազգերը:

### ԱՄՓՈՓՈՒՄ

Աստված ուզում է օրհնել ընտանիքներն ու տեսնել, որ նրանք քայլում են ազատության և առողջ փոխհարաբերությունների մեջ՝ Իր հովանու ներքո: